Մ Ա Ր Տ Ի Կ Ի

Հ Ո Ւ Շ Ա Տ Ե Տ Ր

# ԱՎԻԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

358.4
Ա-90

ԵՐԵՎԱՆ, 1931

1 MAR 2010

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՑԵՔ

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ ՀՈՒՇԱՏԵՏՐ

358.4
Ս-90

# ԱՎԻԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

ՍՏՐԻԺՎՍԿԻ

ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ Է ՏՐՎԱԾ ԲԳԿԲ ՇՏԱԲԻ
5-ՐԴ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Հ. Հ. ԴԻՎ. ՔԱՂԲԱԺՆԻ ՀՐԱՏԱՐԱԿ.

Յերևան 1931 թ.

0 6 AUG 2013
92.384
21933

Памятка красноармейцу
**ОБ АВИАЦИИ**

СТРИЕВСКИЙ

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ՀՐԱՏ. 1523
ԳՐԱՌԵՊՎԱՐ 6195 (բ)
ՏԻՐԱԺ 6500, ՊԱՏՎԵՐ 951

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ Арм. ССР
ИМ. А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

10190-53

# ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԻՐ ԱՎԻԱՑԻԱՆ

Ավիացիան կարող է արագորեն շարժվել ամեն ուղղությամբ, կարող է դիտել շատ բարձրից և ծանր հարվածներ հասցնել յերկրի վրա յեղած նշաններին, մի բան, որ հրետանին չի կարող: Օդային հակառակորդը կարող է սպառնալ ոչ միայն ճակատի զորքերին, այլև մեր խորը թիկունքին: Տարեց-տարի աճում է հակառակորդի ավիացիան և մահ ու ավերում է սպառնում բոլոր նրանց, ովքեր չեն կարող խելացի կերպով պաշտպանվել օդային հարվածներից: Ահա թե ինչու յուրաքանչյուր կարմիր բանակային պետք է իմանա ա-

ղային հակառակորդի հատկությունները, նրա կողմից գործադրվող միջոցներն ու ձևերը, հետևապես և պետք է իմանա պաշտպանվելու միջոցները։

## ՄԱՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԹԻՌՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ (ՏԻՊԵՐԸ)

Օդում գտնվող ամեն մի ինքնաթիռ սպառնում է քեզ, լինի նա կործանիչ, հետախույզ, շտուրմավիկ կամ ծանր ռմբատար, թեև նրանցից ամեն մեկն ունի իր նշանակությունը։

Մարտական բոլոր մեքենաներից ամենամեծ արագությունն ունի կործանիչը (մինչև 300 կիլոմետր մի ժամում)։ Նա փոքր չափի յե, մի տեղանի, քիչ է պատահում յերկտեղանի։

Այդ ժիր ու արագաշարժ ինքնաթիռը ունի հզոր մոտոր 600 ձիու ուժի և այրման պաշար է կրում իր հետ



մինչև 2—½ ժամվա համար (տես նկ. 1)։ Նրա հիմնական խնդիրն է՝ օդային մարտ մղել, ոչնչացնել հակա-




ՆԿ. 1. ԿՈՐԾԱՆԻՉ (ՖՐԱՆՍԻԱ ԼԵՀԱՍՏԱՆ)

ռակ կողմի ինքնաթիռներին, վորտեղ էլ նրանց հանդիպելու լինի, և այդ-

ղեկով ապահովել իր հետախուզական և ռմբանետական ավիացիայի աշխատանքը:

Հետախույզ ինքնաթիռը դիտում է, հետախուզում է և վորոնում է վոչ միայն այն նշանները, վոր մարտադաշտում են գտնվում, այլև ճակատի գծից հեռու ընկած նշանները: Այն բոլորը ինչ վոր նա տեսնում է յերկրի վրա գրի յե առնում կամ լուսանկարում է. շատ դիպուկ կերպով ռումբեր է ձգում և հարվածում է զորքերին իր գնդացրերի կրակով: Բայց նա չի կարող շատ մարտապաշար բարձրացնել իր հետ: Մեքենան յերկտեղանի յե, մոտորը 400-600 ձիու ուժի, միջին արագությունն է 200 կիլոմետր մի ժամում, պաշարը բավականացնում է 4-5 ժամ: (տես նկ. 2): Սովորաբար թռչում է մենակ կամ օղակի հետ (2-3 ինքնաթիռ):



Ռմբատարը հանդիսանում է վորպես մի չարժուն պլատֆորմա, վորի վրա կարելի յե դնել և՛ գնդացրեր, և՛




ՆԿ. 2. ՀԵՏԱԽՈՒՅԶ ԻՆՔՆԱԹԻՌ (ՖՐԱՆՍԻԱ, ՌՈՒՄԻՆԻԱ, ԼԵՀԱՍՏԱՆ):

թեթև թնդանոթներ և կարող է վերցնել մեծ քանակությամբ ռումբեր: Նրա խնդիրն է՝ ավերել զանազան տե-

տակ ռազմական կառուցվածքներ, յերկաթուղային հանգույցներ և արդյունաբերական կենտրոններ, վորոնց հրետանին գնդակոծել չի կարող: Նա (տես նկ. 3) բազմամոտոր մեքենա յե




ՆԿ. 3. ՌՄԲԱՁԻԳ (ՖՐԱՆՍԻԱ, ԼԵՀԱՍՏԱՆ, և ՌՈՒՄԻՆԻԱ)

(ունի մինչև 4 մոտոր), արագու-



թյունն է 150–180 կիլոմետր մի ժամում՝ ունենալով մինչև յերկու հազար կիլոգրամ բեռ և 6-7 ժամվա համար այրելու պաշար: Ցերեկը թռչում է խմբակով, ջոկատի կազմում—եսկադրիլիա: Գիշերը միշտ թռչում է մենակ:

Շտուրմավիկը գործում է փոքր բարձրությունների վրա (ածիլող թռիչք) կենդանի նշանների դեմ: Ունի մեկ կամ յերկու հզոր մոտոր, մեծ թվով գնդացրեր: Նրա կարեվոր մասերը պատած են զրահով հակառակորդի գնդացրային և հրացանային կրակից պաշտպանվելու համար: Շտուրմավիկը սպառնում է զորքերի ամեն տեսակ անզգույշ կուտակումներին:

## ԻՆՉՊԵՍ ՃԱՆԱՉԵԼ ԻՆՔՆԱԹԻՌՆԵՐԸ

Յեթե ուզում ես իմանալ թե վո՛ր ինքնաթիռն է ավելի քեզ համար վը-

տանգավոր—կարողացիր տարբերել (զանազանել) նրանց օդում:

Ինքնաթիռը յերկնքում յերևում է վորպես մի մութ ուրվանկար (սիլուետ), վորի ձևը կախված է թռիչքի ուղղությունից, ինքնաթիռի դիրքից և նրանից թե վորտեղ է գտնվում դիտողը յերկրի վրա:

Ինչպես են ճանաչում ինքնաթիռները:

Յեթե ինքնաթիռը մոտենում է ուղիղ դեպի քեզ կամ հեռանում է քեզանից, ուշադրություն դարձրու նրա թևերի և մոտորների թվի վրա, նրա նեցուկների (ճաղերի) թվի և ձևի վրա, թևերի մեծության վրա և պոչի ձևի վրա: Յեթե ինքնաթիռը թռչում է գլխիդ վրայով, ուշադրություն դարձրու թևերի, նեցուկների և պոչի ձևի վրա: Յեթե ինքնաթիռը թռչում է քեզանից դեպի աջ կամ ձախ



ուշադրություն դարձրու թևերի թվի վրա, թե վորքան աչքի յեն ընկնում վերևի կամ ներքևի թևերը և պոչի ձևի վրա:

Մշտապես ուսումնասիրիր մեր հակառակորդների ինքնաթիռները աղյուսակով, վոր զորամասում կա: Ամեն հարմար դեպքում նույնպես վարժվիր քո ինքնաթիռների տիպերը վորոշելու մեջ, յերբ տեսնում յես նրանց օդում:

## ԱՎԻԱՑԻԱՅԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Մեծ բարձրության վրա օդում աշխատելը, մանավանդ մարտական պայմաններում, չափազանց դժվար է և շատ անգամ հնարավոր չէ: Ինքնաթիռի աշխատանքը, ավելի շատ քան մի ուրիշինը, կապված է յերկրի հետ: Նրա համար հարկավոր է իջնելու հրապարակ բավարար չափով

(այերոդրոմ), որ հարթ լինի, որ տեղական արգելիչ առարկաներ չլինեն (փոսեր, թմբեր, թփուտներ, ծառեր,) որ գետինը պինդ լինի, մոտին բնակելի շենք լինի և այլն: Այերոդրոմը (իջնելու հրապարակը) ավիացիայի ցավոտ տեղըն է. այերոդրոմ հաճախ չի լինում: Հարմար այերոդրոմների պակասությունը հարկավոր տեղերում ոչ միայն դժվարացնում են օդային գործողությունները, այլև յերբեմն բոլորովին անհնար են դարձնում:

Ինքնաթիռի աշխատանքը կախված է և՛ յեղանակից, օրվա ժամանակից և կլիմայից: Այժմ ինքնաթիռները թռիչքներ կարող են կատարել ամեն տեսակ յեղանակին, սակայն նրանք չեն կարող մարտական աշխատանք կատարել: Ավիացիան չի կարող աշխատել մառախուղին և ցածր ամպեր



յեղած ժամանակ, վորովհետև օդային դիտողը չի տեսնում յերկիրը և չի կարող հետևել գործերի ընթացուղիներին և դիտել յերկրի վրա յեղած նշանները:

Ինքնաթիռը շատ բարդ և դյուրաբեկ մեքենա յե: Նա չի կարող շատ յերկար մնալ օդում, նրան թռչելիս դժվար է քողարկել: Ավիացիայի այդ բոլոր թույլ կողմերը պետք է օգտագործել նրա դեմ կռվելու ժամանակ:

## ԻՆՉ Է ՏԵՍՆՈՒՄ ԻՆՔՆԱԹԻՌԸ ՕԴԻՑ

Ինքնաթիռից յերկրին դիտելու հաջողությունը կախված է՝ թռիչքի բարձրությունից, օդի թափանցիկ լինելուց, այն տեղանքի լուսավորված լինելուց և գույնից (ֆոնից), վորի վրա յե գտնվում դիտելի առարկան:

Ցերեկը տեղանքի վրա կան ոդից շատ աչքի ընկնող առարկաներ և լավ տեսանելի առարկաներ (գետեր, լճեր, ճանապարհներ, անտառներ, մեծ-մեծ գյուղեր և այլն), այն ժամանակ դիտողը կարող է քարտեզով նշված թռիչքի ճիշտ ճանապարհը գտնել: Նա կարող է ճշտորեն վորոշել նշանի այն տեղը, վոր հետախուզության ժամանակ է բացվել, և շուտով կգտնի այդ նշանը ոդից գրոհելու ժամանակ: Յեթե տեղանքը միատեսակ է (միապաղաղ անտառ, տափաստան), այն ժամանակ վոչ միայն աշխատանքը կը դժվարանա, այլև կարող է և միանգամայն անհնար դառնալ:

Յեթե օդը միջին թափանցիկություն ունի, ինքնաթիռից լավ կարելի յե տեսնել 5-6 կիլոմետր լայնություն մի շերտ. այսինքն կարելի յե տեսնել այն բոլոր առարկաները, վո-



րանք ընկած են թռիչքի գծից յերկու կողմում 2-3 կիլոմետրի վրա: Ավելի խոշոր առարկաները՝ ել ավելի հեռվում, օրինակ՝ 6-8 կիլոմետրի վրա: Հարթ, բաց տեղանքում (օրինակ՝ մարգագետնի վրա) անհատ մարդիկ և ձիավորները տեսանելի յեն մոտավորապես հազար մետր բարձրությունից: Առանձին սայլերն ու հրանոթները տեսանելի յեն հազար հինգ հարյուր մետր բարձրությունից. մինչև յերեք հազար մետր բարձրությունից յերևում են խոշոր զորասյուների և գումակների շարժումները:

Ինքնաթիռի վրա կա հատուկ լուսանկարչական ապարատ, վորը իր պլաստինկայի վրա նկարում է վորևէ նշանի ամենափոքր մանրամասնությունները անգամ:

Գիշերը ավիացիայի մարտական աշխատանքը բավական դժվար է:

Բայց և այնպես գիշերը ավելի մի վտանգ կա օդային հակառակորդի կողմից հարձակվելու տեսակետից (կործանիչների կողմից) և յերկրից գնդակոծելու տեսակետից, և կարելի յե թռչել փոքր բարձրությունների վրա:

Ջոկերը միշտ պետք ե նկատի ունենան թե տեղանքը վորքան տեսանելի յե օդից և վոչ մի դեպքում շարժման ժամանակ չպիտի կանգ առնեն այնպիսի առարկաների մոտ, վորոնք լավ տեսանելի յեն վերևից: Անհրաժեշտ ե հաճախակի գործածել գիշերային յերթեր և միշտ քողարկվել վոչ միայն յերկրային կրակից, այլև օդային հակառակորդից:

## ԱՎԻԱՑԻԱՅԻ ԳՆԴԱՑՐԱՅԻՆ ԿՐԱԿԸ

Գնդացրերը այնպես են դրվում ինքնաթիռի վրա, վորպեսզի հնարա-



վոր լինի դեպի նշանը թռչելիս կրակ վարել դեպի առաջ, նշանի վերևում—դեպի ներքև և նշանից թռչելիս—յետևում: Հրաձգության այս յերեք տեսակը վոչ բոլոր ինքնաթիռներն են կատարում, վորովհետև նրանք բոլորը չունեն դրա համար հարկավոր հաստոցները: Կործանիչը, սովորաբար հրաձգում ե դեպի առաջ (բացի յերկտեղանիններից), հետախույզը հրաձգում ե դեպի առաջ և դեպի յետ: Միայն հատուկ ինքնաթիռները—շտուրմայինները, նույնպես և ռմբանետներից մի քանի տեսակները ունեն հաստոցներ՝ դեպի առաջ, ներքև և դեպի յետ հրաձգության համար:

Օդից գնդացրային կրակն ավելի թույլ ե, քան յերկրի վրա: Սակայն չափազանց մեծ արդյունքներ ե տալիս յերբ օդից հրաձգություն են կատարում խոշոր նշանների վրա, ինչպես

օրինակ՝ ներփակյալ յերթային զորասյուների վրա: Ամենից հեշտ է օդից գրոհել հետեվակի յերթասյուների վրա, այնուհետեվ ձիաքարշ հրետանու, հեծելազորի վրա, և մանավանդ գումակի վրա, վորտեղ ամենից հեշտ են խուճապի մատնվում:

Այդ պատճառով զորասյունի վրա գրոհը սկսում են միշտ ետից (պոչից):

Հասկանալի յե, վորքան զորամասը չափով է պաշտպանվում ավիացիայի հարձակումից, վորքան ավելի հարձակման ժամանակ յերկրի վրա քիչ են խուճապի մատնվում, այնքան եվ քիչ կորուստներ է լինում: Յերբ 100-150 մետր բարձրությունից յերեք ինքնաթիռից բաղկացած ոդակը (ամեն մի ինքնաթիռն ունի 4 գնդացիր) ներփակյալ զորասյունի վրա հրաձգություն կատարելիս, մոտավորապես 30-35



տոկոս գնդակներ է տալիս, իսկ մասնավոր զորասյունի վրա հրաձգություն կատարելիս միայն 2-3 տոկոս: Յերկարաձիգ և նեղ նշանների վրա գրոհելիս շտուրմային ավիացիան, սովորաբար, յերամաշար է ընդունում, կազմված ոդակներից, վորոնք թռչում են մեկը մյուսի յետեվից հանկարծակի և թաքուն մոտենալու համար: Ոգտագործում են ածիլող թռիչքը 10-ից մինչև 400 մետր բարձրությունների վրա:

## ՌՄԲԱՆԵՏՈՒՄ ՅԵՎ ԹՈՒՆԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՂ ՏԱԼԸ

Բեկորային ռումբը—ամենից լավ միջոցն է յերկրի վրա զորքերին հարվածելու համար: Որինակ 40 հատ ռումբ բարձրացնող ինքնաթիռը, յեթե ամեն մի ռումբը կշռում է 10 կիլոգրամ, կարող է իր բեկորներով

(կասետներով) ծածկել 100 մետր լայնությամբ և 4 կիլոմետր յերկարությամբ մի տարածություն։ Այդ դեպքում հարվածումը կախված կլինի ինքնաթիռների խմբակների քանակից, վորոնք թռչում են մեկը մյուսի յետևից։

Անշարժ նշանները (օրինակ՝ պահեստներ մարտապաշար, խրամուղիներ, կամուրջներ, բեռնաթափման կայարաններ և այլն) ռմբանետելու համար գործադրվում են 16-ից 200 կիլոգրամ քաշ ունեցող հրձիգ ֆուգասային ռումբեր։

Ռումբով ուղիղ նշանին դիպչելու համար ինքնաթիռը պետք է թռչելով անցնի ուղիղ նշանի վերևով։ Յեթե նույնիսկ շատ քիչ չափով թեքվի դեպի մի կողմը այլևս ռումբը նշանին չի կպչի։ Ինքնաթիռը ռմբանետման մոմենտին չի կարող մանյովրել վոչ բարձրությամբ և վոչ ուղղությամբ։ Այդ պատճառով վորպես լավ նշան կարող է ծառայել նետման բոլեն զենիթային հրետանու հրաձգության համար և կործանիչների վրա գրոհի համար։ Բացի գնդացրերից և բեկորային ռումբերից, ավիացիան շտուրմային գործողությունների ժամանակ շաղ է տալիս զանազան տեսակ թունավոր նյութեր (ԹՆ), ինչպես ռումների միջից, այնպես էլ անմիջապես ինքնաթիռի մեջ սարքած ամաններից (բալոն) և անոթներից։

ԹՆ շաղ են տալիս այն դեպքերում, յերբ հարկավոր է յերկարացնել գրոհի գործողությունը։ Քիմիական ռումբի պայթելուց հետո, վոչ մի մարդ, վոր չի պաշտպանված, չի կարող անցնել այդ ռայոնով, յերբեմն մի քանի տասնյակ ժամվա ընթացքում։

## ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՀԱԿՕԴԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Օդային հարձակումից կարելի է պաշտպանվել զենիթային հրետանով հաստոցավոր ու ձեռքի գնդացիրներով և հրացանի կրակով: Օդային հակառակորդի դեմ կռվելու ամենալավ միջոցը իր ավիացիան է. բայց նրա վրա չի կարելի միշտ հույս դնել, վորով-հետև նա չի կարող ամեն տեղ տիրապետող հանդիսանալ: Դրա համար խաղաղ ժամանակ մարտական պատրաստությունն անցնելիս պետք է հաստատ իմանալ օդային հակառակորդի դեմ կռվի միջոցները և խելացի կերպով գործադրել պաշտպանության միջոցները,—ինչպես բնական քողարկումը, քողարկային կարգապահությունը և այլն:

## «ՕԴՏԱՆԿԱԳԻ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Հակառակորդի ինքնաթիռների



հայտնվելու մասին իր ժամանակին զորքերին զգուշացնելու համար կազմակերպում են օդային դիտողություն, ծանուցելու և կապի այնպիսի ծառայություն, վոր կարճ կոչվում է—«ՕԴՏԱՆԿԱԳ»: Զորամասերը միշտ պետք է դիտողություն անընդհատ օդի վրա՝ թե՛ հանգստի, թե՛ յերթի ժամանակ և թե մարտում: Առանց այդ ծառայության չի կարող լինել և պաշտպանություն:

Յեթե զորքերը դասավորված են տեղում օդային դիտողություն են կատարում ինչպես անշարժ պահպանության մեջ, այնպես էլ զորամասի տեղափոխման ժամանակ, հատուկ պոստերի միջոցով, վորոնց կազմում նշանակվում են 2—4 առանձին մարտիկներ: Մի պոստ սպասարկում է 3-ից 5 կիլոմետր շառավիղով շրջան: Այդ պոստերի հաջող աշխատանքի համար

հարկավոր է լավ հաստատված տեխնիկական կապ։

Պոստերի հեռացումը կախված է զորական մասի մեծությունից, որին պոստերն սպասարկում են, և այն ժամանակից, որ պահանջվում է ոդային հակառակորդին հանդիպելու պատրաստության համար։

Յեթե հնարավոր չէ շուրջանակի դիտողություն կազմակերպել, այն ժամանակ պոստերը տանում են առաջ, կողմերն ու թիկունքը միայն հակառակորդի հայտնվելու ամենից ավելի հավանական ուղղությունների վրա։

Յերթերի ժամանակ զորասյուներում հեռավոր և անմիջական ոդային դիտողության ՈԴԾԱՆԿԱՊ-ի ծառայություն չի տարվում։ Հեռավոր դիտողությունը կատարվում է հատուկ հեծյալ դիտողների միջոցով (յերկուական ամեն մի պոստին), որոնք ըն-



թանում են առաջավոր և կողքերի ուղեկալների հետ։ Անմիջական ոդային դիտողությունը զորասյուներում կատարում են ստորաբաժանման մեջ հատուկ նշանակված զույգ դիտողները, ամեն մի գումարտակին մի զույգ, իսկ փակ տեղերում— ամեն մի վաշտին մի զույգ։ Զորասյունին ոդային հակառակորդին հանդիպելու համար կարող է պատրաստվել 1—2 րոպեյում, ընդվորում այդ ժամանակի ընթացքում ինքնաթիռը կարող է 3—6 կիլոմետր տարածություն անցնել։ Դրա համար պոստերը զորասյունից պետք է հեռանան ոչ պակաս, քան 2—4 կիլոմետր։ Հեռավոր դիտողության պոստերից ազդանշանները տրվում են հրթիռներով, իսկ ոդային տագնապը տարվում է փողհարների ազդանշանային փողերով (ազդափողերով)։ Գիտենալով ավիացիայի հատկությունները ու նրա

գործողությունները, սովորիր դիտել երկինքը, տագնապել կազմակերպված և այդ տագնապի մասին հայտնել ինչպես քո, այնպես էլ հարեվան զորամասերին: *Միայն այդ դեպքում դու և քո ամբողջ զորամասը կարող եք ժամանակին հարկավոր միջոցները ձեռք առնել և հանդիպել օդային թշնամուն այնպես, ինչպես հարկավոր է:*

## ՑԱԾՐԱՑՈՂ ԻՆՔՆԱԹԻՌՆԵՐԻ ԳՆԴԱԿՈԾՈՒՄԸ

*Հակառակորդի ցածրացող ինքնաթիռներին գնդակոծելու համար, պետք է կազմակերպված կրակ վարել ինչպես հրացաններով, այնպես էլ գնդացիրներով: Այդպիսի դեպքերում ինքնաթիռների վրա կրակ են վարում վաշտերում 1–2 հրաձգային ջոկ, լավագույն հրաձիգների թվից. Նրանք հրաձգության համար գրավում են տե-*



*ղանքի բարձր կետերը, զորքերին ամմիջապես մոտիկ, հրաձիգների մի խմբակը մյուսից 300–500 մ. հեռու: Կրակ են վարում մինչև 400 մետր հեռավորության վրա: Գնդացիրները դասավորվում են դասակներով 600-1200 մետր միջանցներով դասակների միջև (յեշելոնաձև) այնպես, որ բոլոր կողմերից դեպի պաշտպանվող զորքերը յեկած մատույցները, ոչ պակաս, քան 500 մետրի վրա, ընկնեն գնդացրերի հարվածման շերտի մեջ:*

## ՔՈՂԱՐԿՈՒՄ ՕԴԱՅԻՆ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻՑ

*Քողարկվել նշանակում է օդային դիտողին մոլորության մեջ գցել, թաքցնել իսկականը և ցույց տալ կեղծը: Այդ նպատակով զորքերը հանգստի համար տեղավորվում են բնակավայրերում, անտառներում կամ խիտ*

կտրտուկ տեղանքում, վորտեղ դժվար է ոդից դիտել: Պետք է տեղավորվել փոքր խմբակներով բակերում կամ շինությունների ու ծառների շվաքներում: Վոչ մի դեպքում չի կարելի մարդկանց ու ձիերի կուտակում թույլ տալ բաց տեղերում: Գիշերը արգելվում է կրակ անել, վորովհետև կրակը ապաքողարկում է զորքերի տեղավորումը (ցույց է տալիս տեղը):

Ցերեկը և լուսավոր գիշերին յերթային շարժումներ կատարելիս, յերթը թաքցնելու համար, պետք է շարժվել մասնատված շարքերով, բաց տեղերը հարկավոր է անցնել փոքր ստորաբաժանումներով և խստորեն պահպանելով յերթի կարգապահությունը:

Ոդից ավելի լավ կարելի յե տարբերել շարժվող առարկաները հանգիստ կանգնած առարկաներից, դրա համար յեթե պարապան թույլ է տալիս,



հակառակորդի ինքնաթիռ հայտնվելու դեպքում, պետք է դադարեցնել շարժումը և պառկել, հարմարվելով տեղանքին:

## ԻՆՉ ՊԵՏՔ Է ՍՈՎՈՐԻ ՄԱՐՏԻԿԸ

Ամրացրու ավիացիայի դեմ կռվի հմտությունները բոլոր պարապմունքներին ու ուսուցման ժամանակ՝ մարզանքի միջոցով:

Սովորի՛ր ճանաչել ինքնաթիռների տեսակները (տիպերը), դիտել յերկինքը, խելացիորեն տագնապ բարձրացնել, կազմակերպված կրակով հանդիպել հակառակորդի ցածրացող ինքնաթիռին, օգտագործել բնական քողարկումը դաշտային պայմաններում և պահպանել յերթային կարգապահությունը:

Դրա համար զարգացրու անհրաժեշտ հատկությունները, այն է՝ զգոնու-

*թյունների արագությունը, կոփվածությունն ու ինքնատիրումը՝ մարզանքի և սոցիալիստական մրցակցության միջոցով:*



ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ Арм. ССР
ИМ. А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

# ՑԱՆԿ

Ուսումնասիրիր ավիացիան . . . . 3
Մարտական ինքնաթիռների տեսակները (տիպերը) . . . . . . . . . 4
Ինչպես ճանաչել ինքնաթիռները . . . 9
Ավիացիայի թույլ կողմերը . . . . 11
Ինչ է տեսնում ինքնաթիռը օդից . . 13
Ավիացիայի գնդացրային կրակը . . 16
Ռմբանետում և թունավոր նյութերի շաղ տալը . . . . . . . . . . 19
Ինչպես կազմակերպել հակօդային պաշտպանություն . . . . . . . 22
«ՈԴԾԱՆԿԱԳԻ» շաղ տալը ծառայությունը 22
Ցածրացող ինքնաթիռների գնդակոծումը 26
Քողարկում օդային հակառակորդից . 27
Ինչ պետք է սովորի մարտիկը . . . 29

Դիտողության համար



ՀՀ Ազգային գրադարան
NL0212520

42.584

ԳԻՆԸ 5 Կ.